



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆՎԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ՏՈՒՄ ԿԼԵՆՏԵՅԻ ՈՍՏԻԿԱՆԱԴԵՏԻՆ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր.Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Հինգշաբթի, 17 Մարտի յետմիջօրէին, այցելութիւն մը տուաւ Կլենտէյլի ոստիկանութեան կեդրոնը եւ հանդիպում ունեցաւ ոստիկանապետ Ռան Տէ Փոմփայի ու ոստիկանատան տարբեր բաժանմունքներու անոր գործակիցներուն հետ: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանար Արժ. Տ. Վազգէն Քիւյ. Աթմաճեան:

Առաջնորդ Սրբազանին այցելութիւնը փոխադարձութիւն մըն էր այն այցելութեան, զոր Տէ Փոմփա տուած էր Ազգային Առաջնորդարան՝ իր նշանակման առիթով: Հանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու Կլենտէյլի ոստիկանութեան աշխատանքներուն ու դիմագրաւած հարցերուն մասին: Ինչպէս առաջին հանդիպումին, Հինգշաբթի օր եւս, ոստիկանապետը պատրաստակամութիւն յայտնեց հաղորդակցութիւնները բաց պահելու յատկապէս շրջանի հայութիւնը հետաքրքրող հարցերու մասին: Առաջնորդ Սրբազանը, իր կարգին, գնահատանքով արտայայտուեցաւ ոստիկանութեան ծառայութիւններուն մասին եւ խոստացաւ կարելիի սահմաններուն մէջ զարգացնել փոխադարձ գործակցութիւնը:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը Ազգ. Առաջնորդարանի մատրան յուշանուէր մը յանձնեց Ոստիկանապետին:

PRELATE MEETS WITH GLENDALE POLICE CHIEF

On Thursday, March 17th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited the Glendale Police Department where he met with Police Chief Ron De Pompa and staff. Pastor of St. Mary's Church Rev. Fr. Vazken Atmajian accompanied the Prelate.

The meeting was the second between the Prelate and Police Chief, the first being last year at the time of De Pompa's appointment as Police Chief.

The discussion centered on the endeavors of the Glendale Police Department and general issues they face. As during their previous meeting, Chief De Pompa once again iterated he Police Department's readiness to

maintain communication with the Prelacy, especially with regards to matters involving the Armenian community.

The Prelate commended Chief De Pompa for his service and commitment to the safety of the community, and assured him that mutual cooperation and collaboration would continue.

At the conclusion of the meeting, the Prelate presented Chief De Pompa with a memento of the Prelacy Chapel.